Միսիոներ Ֆանիվան

Մարիսա Վիդիսոն
Եկեղեցու ամսագրեր
(Հիմնված է իրական պատմության վրա)

Նարը՝ Շաա Քոզլնի

Ֆանիվան իր տան պատուհանից դիտում էր մարդաշատ փողոցը: Նա տեսնում էր մարդկանց, որոնք տեղափոխում էին բանջարեղեններով, բրնձով, հագուստեղենով և այլ ապրանքներով լի արկղեր վաճառքի համար: Նա լսում էր մեքենաների շչակների ձայները և շների հաչոցը: Ապա նա լսեց մեկ այլ ձայն:

«Մայրիկ, դուռը թակում են»: Կանչեց Ֆանիվան: Մայրիկը բացեց դուռը: Շքամուտքում կանգնած էին երկու երիտասարդ տղամարդիկ՝ կոստյումով և փողկապով: Ֆանիվան Մադագասկարի իր հարևանների մեջ նախկինում երբեք չէր տեսել այդպես հագնված որևէ մեկին:

«Մենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներ ենք»,- ասաց նրանցից մեկը: «Մենք սովորեցնում ենք մարդկանց Հիսուսի մասին: Կարո՞ղ ենք կիսվել ձեզ հետ ուղերձով»:

Ֆանիվան ուրախացավ, երբ մայրիկը նրանց ներս հրավիրեց: Ողջ ընտանիքը հավաքվեց լսելու Հիսուս Քրիստոսի մասին, և թե ինչպես է Նրա Եկեղեցին կրկին երկրի վրա:

Այդ օրվանից միսիոներները հաճախ էին այցելում Ֆանիվայի ընտանիքին: Նրանք բերեցին մի գիրք, որը կոչվում էր *Մորմոնի Գրքի պատմությունները:* Ֆանիվան սիրում էր կարդալ այն իր ընտանիքի հետ:

Մի օր ես միսիոներ կդառնամ և ուրիշների հետ կկիսվեմ Մորմոնի Գրքով, ինքն իրեն ասում էր Ֆանիվան:

Մեկ այլ անգամ, երբ միսիոներները եկան, նրանք սովորեցրին Ֆանիվայի ընտանիքին, թե ինչպես աղոթել: Ֆանիվան իմացավ, որ կարող էր խոսել Երկնային Հոր հետ ցանկացած պահի, ցանկացած վայրում:

Մի օր ես միսիոներ կդառնամ և կսովորեցնեմ մարդկանց աղոթքի մասին, մտածեց Ֆանիվան:

Մի օր միսիոներները կարևոր հարց ունեին:

«Կհետևե՞ք Հիսուս Քրիստոսի օրինակին և կմկրտվե՞ք»,- հարցրեց նրանցից մեկը:

Ֆանիվան ուրախություն զգաց իր սրտում: «Այո»,-ասաց տղան:

«Այո»,- ասացին նրա եղբայրն ու մայրը:

Հայրիկն ասաց, որ նա դեռ պատրաստ չէր մկրտվել: Սակայն նա դեմ չէր, որ ընտանիքի մյուս անդամները մկրտվեին: Ուստի, նրանք մկրտվեցին: Ֆանիվային մկրտեց միսիոներներից մեկը, ով նրան սովորեցրել էր Հիսուսի մասին:

Մի օր ես միսիոներ կդառնամ և կօգնեմ մարդկանց մկրտվել, մտածեց Ֆանիվան:



Եկեղեցու անդամ լինելու լավագույն կողմերից մեկը Երեխաների միությունն հաճախելն էր: Ֆանիվան սիրով էր մասնակցում դասերին և հանդիպում նոր ընկերների: Սակայն նա ամենաշատը սիրում էր երգել Երեխաների միության երգերը: Մի կիրակի Երեխաների Միությունում նրանք երգ էին երգում ավետարանով կիսվելու վերաբերյալ:

«Ես ուզում եմ միսիոներ լինել հիմա»,- երգում էր Ֆանիվան: «Ես չեմ ուզում սպասել, մինչև կմեծանամ»:

Ես կարող եմ սկսել միսիոներական աշխատանքը հիմա, հասկացավ Ֆանիվան: *Ես ստիպված չեմ սպասել՝ մինչև գա օրը:*

Այդ պահից սկսած Ֆանիվան փնտրում էր եղանակներ ավետարանով կիսվելու համար: Նա փորձում էր լավ օրինակ լինել: Նա հրավիրում էր մարդկանց եկեղեցի: Նա օգնում էր իր հարևաններին: Մի քանի տարի անց նա բավականաչափ մեծ էր և միսիոներների հետ գնում էր ուսուցանելու իր քաղաքի մարդկանց: Եվս մի քանի տարի անց նա անձամբ ծառայեց միսիայում . հանդիպեց նոր մարդկանց և կիսվեց ավետարանով, ճիշտ, ինչպես միսիոներներն էին կիսվել իր հետ: ●

«Ես նախընտրում եմ իմ ժամանակն անցկացնել միսիոներների հետ, քան անել ցանկացած այլ բան»,- ասում է Ֆանիվան: Նա որպես միսիոներ կանչվեց ծառայելու իր երկրում՝ Մադագասկարում: